Դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր

2023-2024 ուստարի

Քաղսիի միջնակարգ դպրոց

7-րդ դասարան

Դասղեկ՝ Անահիտ Անտոնյան

Դասարանի ընդհանուր բնութագիրը

7-րդ դասարանում սովորում են թվով 31 աշակերտներ, 15 տղա, 16 աղջիկ: Դասարանում ձևավորված է լավ կոլեկտիվ, միմյանց նկատմամբ հարգալից են, հանդուրժող: Աշակերտների մեծամասնությունը ունի ուսման բարձր առաջադիմություն:

Ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում է

*Առաջնային խնդիր համարել աշակերտների առողջության պահպանումը:

*Աշակերտների մոտ զարգացնել հաղորդակցման և համագործակցության կարեղություններ և հմտություններ:

*Նպաստել սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, ինտելեկտուալ հմտությունների զարգացմանը:

*Կազմակերպել արտադասարանական աշխատանքներ, իրականացնել քաղաքացիական դաստիարակություն:

*Ստեղծել ընտանիք-դպրոց ամուր համագործակցություն:

*Հետևել աշակերտների սանիտարահիգենիկ պայմաններին:

*Հետևողական լինել յուրաքանչյուր աշակերտի առաջադիմության, հաճախումների, դրսևորած վարքագծի նկատմամբ:

*Սովորողների մոտ սերմանել բարձրագույն արժեքներ՝ հայրենասիրություն, ազնվություն, պատասխանատվություն, աշխատասիրություն:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

*Կարևորել պետության խորհրդանիշները, հարգանք տածել դրանց նկատմամբ:

* Ներկայացնել մեր ժողովրդի հերոսների մասին պատմություններ, զրույցներ, տեսանյութեր:

*Սովորողների մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, ազգի ավանդուրթների, սովորույթների , հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի նկատմամբ:

Գեղագիտական դաստիարակություն

*Կարողանալ սովորողներին յուրացնել տալ շրջապատող աշխարհի երևույթների, առարկաների, գործընթացների գեղեցկությունները, նրանց մեջ արթնացնել ստեղծագործական հետաքրքրություններ, զարգացնել նրանց գեղագիտական կուլտուրան, գեղագիտական ճաշակը, ընդհանրապես՝ գեղագիտական ընդունակությունները:

Ֆիզիկական դաստարակություն

*Սովորողներին նպատակաուղղել լինել առույգ, կենսախինդ, ուժեղ, դիմացկուն, ակտիվորեն մասնակցել արշավների, զբոսանքների, էքսկուրսիաների, կատարել ֆիզիկական վարժություններ, զբաղվել որևէ մարզաձևով:

* Իրագործել. Առողջ հոգին առողջ մարմնի մեջ ճշմարտության իմաստը, այն դարձնել համոզմունք:

* Հորդորել հետևելու օրինակելի ռեժիմին ու ռիթմին, որոնց անթերի կենսագործումը սովորողի մեջ ներարկում են կարգապահություն, կազմակերպվածություն, ճշտապահություն, ժամանակի զգացողություն, պարտքի ու պատասխանատվության խոր զգացում:

Բնապահպանական դաստիարակություն

*Բացատրել բնության, շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբեևմունքի կարևորությունն ու անհրաժեշտությունը:

* Գիտելիքներ տալ բնության և հասարակական կապի, բնությունից օգտվելու, բնությունը պահպանելու, բնական ռեսուրսների օգտագործման, բնական աղետների վերաբերյալ:

Աշխատանքային դաստիարակություն

*Սովորողի մեջ սեր ներարկել դեպի աշխատանքը, զրույցի միջոցով ներկայացնել, որ հասարակության զարգացման, պետության կայացման գլխավոր հիմքը եղել և մնում է աշխատանքը, որ մարդու երջանկությունը առաջին հերթին պայմանավորված է աշխատանքով:

*Դպրոցականներին ընտելացնել աշխատանքային կարգապահությանը, հասնել այն բանին, որ նրանց աշխատասիրությունը վերածվի ամենօրյա սովորույթի , դառնա բնավորության գիծ:

Բարոյական դաստիարակություն

*Զրույցի միջոցով բացատրել, որ մարդը չի կարող ապրել միայնակ, հասարակությունից դուրս, և որ կարևոր է մարդկանց հետ հաղորդակցումը, շփումը, փոխհարաբերությունները:

*Կարևորել բնավորության այնպիսի գծերը, որոնք են՝ համեստությունը, հանդուրժողականությունը, ազնվությունը, բարյացակամությունը:

*Վարել բարոյական թեմայով զրույց, քննարկել որևէ անձի արարքները, վերլուծել կինոնկար, կարդացած պատմվածքի հերոսի հոգեբանական առանձնահատկությունները և այլն:

Ուսումն. շաբաթ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարող
1	Զրույց գիտելիքի կարևորության մասին	Դասղեկ
2	Զրույց. Համայնքի ավանդույթները, ուխտագնացություն Սբ. Աստվածածին եկեղեցի	Դասղեկ
3	Զրույց ազգային –եկեղեցական տոնի՝ Խաչվերացի մասին	Դասղեկ
4	Զրույց. Հայրենիքը պահվում է հայրենասիրությամբ, փառք մեր հերոսների անմահ հիշատակին	Դասղեկ
5	Արշավ դեպի մոտակա հնավայր, պատմական ակնարկ Հայաստանի մասին	Դասղեկ
6	Զրույց ինչպես լինել լավ ընկեր	Դասղեկ
7	Էքսկուրսիա՝ Պատմության պետական թանգարան	Դասղեկ
8	Զրույց նվիրվածության և փոխօգնության մասին	Դասղեկ
9	Զրույց ազնվության մասին	Դասղեկ
10	Զրույց բնության, կենդանիների մասին	Դասղեկ
11	Տեղում ձմեռող թռչունների համար կերամանների պատրաստում և տեղադրում	Դասղեկ
12	Դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժ թեմայով զրույցի	Դասղեկ
13	Զրույց բնական աղետների, դրանց առաջացման պատճառների մասին	Դասղեկ
14	Ինչ նվիրել միմյանց Ամանորին, այց դրամատիկական թատրոն	Դասղեկ
15	Զրույց. Ինչպես եք դիմավորում Ամանորը	Դասղեկ
16	Քննարկում. Գրքերը մարդու թևերն են	Դասղեկ
17	Զրույց. Ես հայոց բանակի վաղվա զինվորն եմ	Դասղեկ
18	Քննարկում ազգային տոնակատարությունների կարևորության մասին	Դասղեկ
19	Զրույց. Տյանընդառաջ տոնի վերաբերյալ	Դասղեկ
20	Ցերեկույթ. Մայրս ու գարունը	Դասղեկ
21	Քննարկում. գարունը որպես տարվա ամենագեղեցիկ եղանակ	Դասղեկ
22	Զրույց Ապրիլի 7-ի խորհուրդը	Դասղեկ
23	Զրույց՝ նվիրված Սուրբ Հարության տոնին	Դասղեկ
24	Այց Սուրբ Գևորգ եկեղեցի և Կարմիր Ավետարան մատուռ	Դասղեկ

25	Այց Թուխ մանուկ մատուռ, զրույց մատուռի խորհրդի մասին	Դասղեկ
26	Զրույց Ապրիլի 24 –ի վերաբերյալ	Դասղեկ
27	Զրույց. Իմ հայրենիքի պատմության հերոսական էջերը թեմայով	Դասղեկ
28	Զրույց. Ում կուզեի նմանվել թեմայով	Դասղեկ
29	Էքսկուրսիա դեպի մոտակա հնավայր	Դասղեկ
30	Զրույց Մայիսյան հաղթանակներ թեմայով	Դասղեկ
31	Ինչ գիտենք հայ հերոսների մասին	Դասղեկ
32	Ինչ գիտենք հայ արվեստագետների մասին	Դասղեկ
33	Քննարկում այս ուսումնական տարում ունեցած հաջողությունների մասին	Դասղեկ
34	Տարեվերջյան էքսկուրսիա	Դասղեկ
	Դասղեկի ժամ՝ երկուշաբթի 7-րդ ժամ	